Լիանա Դալլաքյան

# ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՑԻ

**Բանալի բառեր –Կիլիկիա, Հեթում, Կոռիկոս, «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի», «Պատմություն թաթարաց», Կղեմես Ե, Նիկոլաս Ֆալկոն, թաթար, արևելք, խաչակրաց արշավանք:**

Միջնադարի հայ պատմագիրների շարքում իր ուրույն տեղն ունի Հեթում Պատմիչը: Ցավոք, ի տարբերություն իրեն նախորդած պատմագիրների, Հեթումի մասին, հատկապես նրա կենսագրության մանրամասների վերաբերյալ մեր տեղեկությունները սակավ են: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հայ պատմաբանասիրական միտքը նրան ավելի քիչ է անդրադարձել: Այս առումով բացառություն է կազմում Կլոդ Մութաֆյանի «Hethom de Korykos historien armenien un prince cosmopolite a l'aube du XIVe siècle» հոդվածը[1]: Հեթում Կոռիկոսցին ծնվել է մոտ 1240-ական թվականներին: Նա ուներ արքայական ծագում: Կիլիկիայի Կոռիկոս բերդաքաղաքը 13-րդ դարի կեսերին պատկանում էր Կոստանդին Գունդստաբլի կրտսեր որդիներից Օշին պայլին, որի ավագ եղբայրներն էին Հեթում I թագավորը (1226-1270) և Սմբատ Գունդստաբլը: Բացի Կոռիկոսից Հեթումին են պատկանել նաև Անամուռը, Մանիոնը, Կուպան և Պունառը, որի մասին վկայում է Հայոց սպարապետ Հեթում պայլի յիշատակարանը[2]: Բացի անվանապես նշվածներից նրա սեփականությունն են եղել նաև այլ բերդեր ու ամրոցներ, որոնք հետո անցել են ավագ որդուն՝ Օշին պայլին: Վերջինս էլ ավելի է ընդարձակել իր տիրույթները՝ դառնալով Իսավրիա երկրամասի մեծ կոմս[3]:

1280-1290-ական թվականներին Հեթում Կոռիկոսցին ամուսնացել է Հեթում I թագավորի դստեր Մարիամի աղջկա՝ Զաբելի հետ: Հեթում Կոռիկոսցու Ավետարանի հիշատակարանում նշվում են նրա կինը և որդիները, որոնցից ավագը՝ Օշինը, հետագայում վարել է պայլի, իսկ Կոստանդինը՝ գունդստաբլի պաշտոնը[4]:

Հեթում Կոռիկոսցին վաղ տարիքում մտերմիկ հարաբերությունների մեջ է եղել իր հորեղբոր Հեթում I-ի հետ,որի մասին նա հիշատակում է իր «Ծաղիկ պատմութեան Արևելից աշխարհի» գրքում: Սակայն որպես պետական գործիչ կայացել է Հեթումի

---

[1] **Mutafian Claude**, Hethom de Korykos historien armenien un prince cosmopolite a l'aube du XIVe siècle, Cahiers de recherché medievales, No. 1, Orleans, 1996, pp. 157-174.
[2] Տե՛ս **Աճէմեան Շ.,** Հայոց սպարապետ Հեթում պայլի յիշատակարանը, «Հայերէն Աստվածաշունչը», Երևան, 2006, էջ 344-351:
[3] Տե՛ս **Մաթևոսյան Կ.,** Հեթում Պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, 2011, էջ 18:
[4] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 395-406:

որդի Լևոն II-ի (1270-1289) օրոք: Հեթում II-ի օրոք (1289-1306) նա միշտ չէ, որ սերտ հարաբերությունների մեջ է եղել թագավորի հետ: Հեթում II-ը մի քանի անգամ հրաժարվել է գահից[1], դարձել կրոնավոր՝ Հովհաննես անունով, և ավագության կարգով գահն անցել է նրա եղբայր Թորոսին: Ժամանակագրության մեջ ասվում է, որ նա հետագայում՝ 1294 թ., Թորոսից հետ է վերցրել իշխանությունը: Թեև ավանդական պատմագիտությունը Թորոսին դասում է Կիլիկիո թագավորների շարքը, սակայն հիմքեր կան պնդելու, որ նա այդ պաշտոնը վարել է տեղապահի կարգավիճակով[2]: Դրա վկան «Գործք Կիպրացւոց» ժամանակագրության Անանուն հեղինակն է. «Հեթում II-ը կշտամբեց իր եղբորը, որ նա ուզեցել էր իրենից խլել թագավորությունը, այդ հարցում մեղադրելով նաև իր երկրի որոշ պարոնների»[3]:

Ժամանակագրության մեջ նշվում է, որ Հեթում Կոռիկոսցին իր եղբայր Օշինի հետ այդ տարում կարճ ժամանակով հեռացել է երկրից: Ենթադրվում է, որ նա եղել է Թորոսի կողմնակիցներից[4]:

1296 թ. հետո Հեթում II-ը այս անգամ գահը հանձնում է իր կրտսեր եղբայր Սմբատին, իսկ ինքը Թորոսի հետ մեկնում Կ. Պոլիս՝ եգիպտական մամլուքների հնարավոր հարձակումներից օգնություն հայցելու: Օգտվելով եղբայրների բացակայությունից՝ Սմբատը, որն ընդամենը թագապահ էր կարգված, ստանալով կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցու և մի շարք իշխանների աջակցությունը՝ իրեն թագավոր է հռչակում[5]: Հավանաբար, իր իշխանությունը օրինական դարձնելու համար Սմբատը լինում է Ղազան խանի մոտ, նրան մեծամեծ նվերներ է մատուցում, ապա ամուսնանում մոնղոլ աղջկա հետ[6]: Հեթում թագավորը տեղեկանալով գահի զավթման մասին՝ շտապում է վերադառնալ երկիր, սակայն Կեսարիայում Սմբատը ձերբակալում է եղբայրներին, Թորոսին խեղդամահ է անել տալիս, իսկ Հեթումին կուրացնում է: Այս դեպքերը թվագրվում են 1297 -ով[7]:

Երկու տարի անց Սմբատի դեմ է դուրս գալիս իր կրտսեր եղբայր Կոստանդինը: Սա բուժում է Հեթումի աչքերը և վերադարձնում գահը: 1299, 1301, 1303 թվականներին Հեթում Կոռիկոսցին Հեթում II-ի հետ էր նրա սիրիական արշավանքների ժամանակ[8]: «Ծաղիկ պատմութեանց» երկասիրության մեջ Հեթում թագավորին նվիրված հատվածերում պատմիչի չոր ոճից կարելի է ենթադրել, որ նրանց հարաբերությունները լարված են եղել: Այնուհանդերձ Հեթում Կոռիկոսցին

---

[1] Տե՛ս **Մաթեւոսյան Ա.,** ԺԳ դար հիշատակարաններ, Ե., 1988, էջ 751:
[2] **Mutafian Claude,** 157-174.
[3] **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 348
[4] Տե՛ս **Մաթևոսյան Կ.,** նշվ. աշխ., էջ 9:
[5] Տե՛ս **Մաթևոսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 789:
[6] Տե՛ս **Hayton,** Fleur, Paris, 1906, p. 209.
[7] Տե՛ս **Հակոբյան Վ.,** Մանր ժամանակագրութիւններ, հ. 2, էջ 170:
[8] **Մաթևոսյան Կ.,** նշվ. աշխ., էջ 10:

Հեթում II-ի թագավորության շրջանում դիվանագիտական առաքելություններ է կատարել: Այդ մասին իմանում ենք 1299 թ. Ղազան խանի հաղթական արշավանքի մասին նրա տված տեղեկություններից. «Երեք օր հետո կանչեց Հայոց թագավորին ու Մուղային՝ հանձնարարելով հետապնդել թշնամուն: Իսկ սուլթանը օր ու գիշեր հեծելով արաբական ուղտերը՝ որոշ բեդվինների առաջնորդությամբ մտավ Բաբելոն: Մյուս սարակինոսները փախան, ուր կարողացան: Նրանցից շատերը փախան Տրիպոլիսի ճանապարհով, որոնք անխնա կոտորվեցին Լիբանանի լեռան մոտ բնակվող քրիստոնյաների կողմից: Երբ Հայոց արքան վերադարձավ Ղազանի մոտ, իմացավ, որ Եգիպտոսը անձնատուր է եղել սուլթանին իր անբավ հարստությամբ, որը Ղազանը առատաձեռնորեն բաժանեց յուրայինների մեջ: Ես՝ եղբայր Հեթումս, այս ամենը իմ աչքով տեսա, քանի որ նրա առաջն էի: Սքանչելի էր, որ Ղազանը՝ փոքրահասակ ու տգեղ դեմքով. մի օրում թշնամուն խորտակեց և երկրորդ օրը ամբողջ հարստությունը բաշխեց իր մարդկանց՝ իր համար պահելով միայն մի դաշույն և Եգիպտոսի գրվածքները»[1]: Հայագետ Ֆրեդերիկ Ֆեյտին իր ուսումնասիրության մեջ հայտնում է, որ Հեթում Կոռիկոսցին միշտ էլ ունեցել է հակում կրոնավոր լինելու, բայց հայրենիքի հանդեպ ունեցած պարտականությունները ստիպում էին նրան մնալ արքունիքում և պետական պաշտոն վարել[2]: Սակայն շուտով, սիրիական հաջող արշավանքից հետո, 1305 թ., Հեթում Կոռիկոսցին հրաժարվեց զինվորական և աշխարհիկ կյանքից՝ կրոնավոր ձեռնադրվելով՝ անցավ Կիպրոս և մտավ Պրեմոնստրատյան լատինական միաբանության մեջ (ordre de Premonstre)[3]: Այդ մասին Հեթում Կոռիկոսցին իր «Ծաղիկ պատմութեանց» գրքում գրում է. «Ես՝եղբայր Հեթումս, վաղուց մտադրվել էի կրել կրոնավորի սքեմը, սակայն թագավորության դժվարին անցքերի (իրադարձությունների) պատճառով չկարողացա թողնել թագավորությունը: Սակայն Բարձրյալի հովանավորությամբ հագեցրի փափագս և սրտիս ուխտը. գնացի Կիպրոս և 1305 թվին ստացա Պրեմոնստրատյան կարգ: Փառք Վերինին, քանի որ Հայոց թագավորությունը բարվոք վիճակում է և Տեր Թորոսի որդի Լևոնի ձեռքով զորանալով՝ նախկին դրությանն է վերածվում»[4]: Հնարավոր ենք համարում նաև այն, որ Հեթում Կոռիկոսցու Կիպրոս տեղափոխվելը քաղաքական նկատառումներով էր պայմանավորված: 1306 թ. Կիպրոսում իշխանությունն անցել էր Ամորին, որի հետ Հեթումը բարեկամական հարաբերություններ ուներ: Ամորիի խնդրանքով Հեթումը գնում է Արևմուտք՝ Հռոմի պապի կողմից օրհնություն ստանալու և իր իշխանությունը օրինականացնելու, քանի որ

---

[1] **Hayton,** Fleur, p. 315.
[2] Տե՛ս **Ֆեյտի Ֆ.,** Հեթում Պատմիչ հեղինակ Ծաղիկ Պատմութեանց Արևելյան աշխարհի, Փարիզ, 1939, էջ 8:
[3] Տե՛ս Նույն տեղում, էջ 9:
[4] **Hayton**, Fleur, p. 324.

հեղաշրջմամբ էր բազմել գահին[1]: Պապը Ամորիին ճանաչում է Կիպրոսի թագավորության կառավարիչ: 1308 թ. մայիսին Հեթումը վերադառնում է Կիպրոս: Հեթումի Արևմուտք կատարած ուղևորությունը ունեցավ ևս մեկ պատմական նշանակություն. Կղեմես Ե պապի կողմից Հեթումը հանձնարարություն ստացավ գրել «Ծաղիկ պատմութեանց Արևելից աշխարհի» («La Fleur des Histoires de la terre d'Orient») երկասիրությունը: Հաստատվելով Ֆրանսիայի Պուատիե քաղաքի վանքում՝ Հեթումն իր պատմությունը բերանացի պատմում է Նիկոլաս Ֆալկոն անունով վանականի, որն էլ շարադրում է երկը միջին ֆրանսերենով: Գրքի սկզբում ասվում է. «Այստեղ սկսվում է Ծաղիկ Արևելից աշխարհի պատմության գիրքը, որը հորինեց Հայթոն (Հեթում) եղբայրը, Կոռիկոսի իշխան, Հայաստանի թագավորի ազգական, առաքված Կղեմես Ե պապի հրամանով, մեր Տիրոջ թվականի 1307 տարվա օգոստոս ամսին, Ֆրանսիայի թագավորության Պուատիե քաղաքի մեջ»[2]: «Ծաղիկ պատմութեանց Արևելից աշխարհի» («La Fleur des Histoires de la terre d'Orient») երկասիրությունը դարեր շարունակ Եվրոպայում մնաց որպես մոնղոլների և Մերձավոր Արևելքի մասին պատմական, ռազմական, քաղաքական և այլ տեղեկությունների անգերազանցելի աղբյուր[3]:

Այնուհետև Նիկոլաս Ֆալկոնը երկը թարգմանում է լատիներեն: XIV դարում Հեթում Կոռիկոսցու ֆրանսերեն բնագիրը կորած համարելով՝ հոգևորական Լելոնգը անտեղյակ լինելով ֆրանսերեն բնագրին, 1351 թ. լատիներեն օրինակը թարգմանում է ֆրանսերենով և սկսում է տարածել: Այսպիսով, նոր համբավ է ստանում Կոռիկոսցու գիրքը[4], որը տպագրվում է զանազան վերնագրերով և թարգմանվում իտալերեն, անգլերեն: Արևելագետ Ս. Միրնին նշում է, որ լատիներեն թարգմանությունը զգալիորեն տարբերվում է ֆրանսերեն բնագրից. թարգմանիչը պապին հաճոյանալու համար «ուղղել» է Հեթում Կոռիկոսցուն[5]:

1842 թ. Մխիթարյան միաբանության անդամ Մկրտիչ Ավգերյանը այն թարգմանում և հրատարակում է գրաբարով «Հեթում պատմիչ թաթարաց» վերնագրով: Ցավոք, բացի այն, որ Ավգերյանը օգտագործել է լատիներեն որոշ չափով ձևափոխված թարգմանութունը, այլ ոչ ֆրանսերեն բնօրինակը, նա ազատ թարգմանություն է կատարել՝ կրճատումներով և գլուխների բացթողումներով

[1] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Խաչակիրները և հայերը, հ. 1, Ե., 2005, էջ 120:
[2] **Ֆէյտի Ֆ.,** նշվ. աշխ., էջ 9:
[3] Տե՛ս **Ազիզյան Ա.,** Հատվածներ Հեթում Պատմիչի «Արևելից երկրների պատմության Ծաղկաքաղ»-ից, «Բանբեր Երեւանի համալսարանի», Ե., 2003, հ. 3, էջ 100:
[4] Տե՛ս **Բաբայան Լ.,** Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության XIII-XIV, Ե., 1981, էջ 338:
[5] Տե՛ս ***Мирный* С. М.,** «*La flor des* estoires *de* terres d'Orient» Гайтона как историко-географический источник по Востоку и по истории монголов, «Вопросы востоковедения», 1956, т. V, стр. 73:

(աշխատության չորրորդ մասը, որը խաչակրաց արշավանքի ծրագիր էր, Մ. Ավգերյանի թարգմանության մեջ բացակայում է- Լ.Դ):

Այժմ Փարիզի Ազգային մատենադարանում է գտնվում Հեթում Պատմիչի 7 ֆրանսերեն ձեռագիր և 2 օրինակ լատիներեն: Դրանց գիտաքննական բնագրի կազմման և հրատարակման գործով զբաղվում է էդ. Դյուլորիեն, սակայն նրա մահվան պատճառով 1881 թ. ընդհատվում է աշխատանքը: Այնուհետև այդ գործը շարունակում են Ուլիս Ռոբերը և կոմս Ռիանը, որոնց օգնում է Շեֆերը: 1885 թ. Ռոբերին և Ռիանին փոխարինում է Լուի Մաս-Լատրին, որը Շեֆերի հետ միասին աշխատանքը ավարտում և հրատարակում է 1906 թ. Փարիզում[1]:

Հեթում Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց Արևելից աշխարհի» երկասիրությունը բաղկացած է չորս մասից: Առաջին մասում խոսվում է Արևելքի 14 երկրների և դրանց ժողովուրդների մասին (Խորեզմ, Կոմանիա, Թուրքեստան, Հնդկաստան, Պարսկաստան, Մարաստան, Հայաստան, Վրաստան, Միջագետք, Խալդիա, Թուրքաց պետություն, Ասորիք, Չինաստան, Ույգորիա-Տարոս): Երկրորդ մասում խոսքը այն կայսրերի ու թագավորների մասին է, որ իշխել են Ասիայում Քրիստոսի ծնունդից ի վեր: Երրորդ մասը ամբողջովին նվիրված է թաթարների պատմությանը: Չորրորդ մասը Խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու մանրամասն մշակված ծրագիր է: Համոզվելով, որ մոնղոլները չէին կարող աջակցել Կիլիկիային Եգիպտոսի սուլթանության դեմ մղվող պայքարում՝ Հեթումը հույսը կապում է Եվրոպական պետությունների հետ: Հայոց թագավորության զորությունը իրատեսորեն գնահատելով՝ նա հասկացել է, որ առանց արտաքին օգնության Կիլիկիայի հայոց թգավորությունը միայնակ չի կարող պայքարել Եգիպտոսի մամլուքների դեմ:

Երկասիրության հետ ծանոթանալուց հետո պարզ է դառնում, որ Հեթումի գլխավոր նպատակը հենց այդ ծրագիրը ներկայացնելն էր: Այդ մասին նշում է ֆրանսիացի ուսումնասիրող Մարի-Աննա Շեվալիեն. «Հեթումի խաչակրաց արշավանքի նախագիծը, որ վերաբերում էր երթուղիներին, թշնամու ուժերին, ֆրանկների հետ անհրաժեշտ դաշինքներին ու զինված ուժերին, վերանվաճման շարժառիթներին և բազում այլ մանրամասների, մեծապես հետաքրքրել է Պապին»[2]: Կղեմես Ե պապը իր հերթին դիմել է Տաճարականների և Հիվանդախնամների մագիստրոսներին, որ հայտնեն իրենց կարծիքը Հեթում Կոռիկոսցու ներկայացրած խաչակրաց արշավանքի մասին: Ժակ դը Մոլեն պապին մի զեկույց է ներկայացնում,

[1] Տե՛ս, Recueil des histoiens des Croisades. Documents armeniens, Paris, 1906, p. 252-253.
[2] **Շեվալիե Մ.,** Կիլիկյան Հայաստանի և հոգևորականության միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Ե., 2013, էջ 19-20:

որտեղ հավանություն է տալիս խաչակրաց արշավանքը Արևելքում կազմակերպելու օգտնին, սակայն չի համաձայնվում Կիլիկյան Հայաստանում ափհանմանը՝ բերելով մի շարք փաստարկներ: Առաջին հերթին, ռազմավարական տեսանկյունից Կիլիկիայի տեղադրությունը նպաստավոր չհամարելով՝ նյութատեղնիկական տեսանկյունից նախապատվությունը տալիս է իտալական նավատորմիղների աջակցությանը: Աշխարհագրականից զատ՝ Կիլիկիան անհամապատասխան հայտարարվեց առողջության համար վնասակար կլիմայի պատճառով, հավաստի է, որ կլիման խոնավ էր և կնպաստեր մանրէների տարածմանը, ինչը կհանգեցներ սննդի համաճարակի: Վերջին փաստարկով նա նշում է, որ հայերը վստահություն ներշնչող մարդիկ չեն, որ նրանց չի կարելի ապավինել մարտի դաշտում, որ նրանք ֆրանկներին կասկածում են իրենց թագավորությունը գրավելու ցանկություն ունենալու մեջ և խոչընդոտում են նրանց մուտք գործել իրենց ամրոցներն ու բերդերը[1]: Կիլիկիայի տարածքով անցնելիք այս խաչակրաց արշավանքը այդպես էլ տեղի չունեցավ:

Հեթում Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց Արևելից աշխարհի» երկասիրությունը իր ժամանակի հասկացողությամբ հանրագիտարան է Արևելքի երկրների աշխարհագրության վերաբերյալ:

Մոնղոլների մասին ժամանակակիցների կամ նախորդների գրվածքների համեմատությամբ, Հեթում Պատմիչի երկասիրությունը նշանակալից քայլ էր: Նրա կարևոր առանձնահատկությունն այն է, որ հարցերի ավելի լայն շրջանակ է ընդգրկում, ավելի մանրամասն է նկարագրում համաշխարհային պատմության մեջ մոնղոլների հանդես գալու նախադրյալները, քան այդ արել են Կարպինին, Ռուբրուքը, Ասցելինը[2]: Երկը հնարավորություն է տալիս եվրոպացիներին ծանոթանալու Արևելքի երկրների քաղաքական փոխհարաբերություններին, որոնց չէր անդրադարձել Մարկո Պոլոն իր «Ճանապարհորդություն» երկասիրությունում: Ըստ Ս. Միրնիի՝ Հեթում Պատմիչը իր աշխատությունը գրելիս օգտագործել է Արևելքի երկրների առևտրականների և ուղղափառ միսիոներների պատմածները, ասորական աղբյուրները, ինչպես նաև երկու հորեղբայրների՝ Հեթում I-ի և Սմբատ Գունդստաբլի հաղորդած փաստերը[3]:

Ֆրանսիացի արևելագետ Պ.Պոլենը գտնում է, որ Հեթում Պատմիչի երկը օգնում է մասնագետներին բացահայտել, վերծանել Մարկո Պոլոյի «Ճանապարհորդության» անհասկանալի հատվածները[4]: Ս. Միրնին Հեթում Պատմիչին ներկայացնում է որպես Եգիպտոսի և սելջուկների դեմ մոնղոլների, պապի և Եվրոպայի պետությունների միջև կնքվելիք հարձակողական դաշինքի նախապատրաստողներից մեկը, որպես հմուտ

[1] Տե՛ս **Շեվալիե Մ.,** նշվ. աշխ., էջ 21:
[2] Տե՛ս **Բաբայան Լ.,** նշվ. աշխ., էջ 341:
[3] Տե՛ս ***Мирный* С. М.,** նշվ. աշխ., էջ 75:
[4] Տե՛ս նույն տեղում:

քաղաքագետ: Պատահական չէ, որ Հեթում Պատմիչի երկի մեջ տեղ է գտել նաև Չինգիզ խանի՝ մահվանից առաջ իր որդիներին տված խրատը. «Չինգիզ խանը կանչեց իր տասերկու որդիներին, խրատեց, որ միշտ լինեն միաբան ու համախոհ՝ տալով նրանց այսպիսի օրինակ: Հրամայեց որդիներից յուրաքանչյուրին մի նետ բերել, և երբ բոլորը միասին էին, հրամայեց ավագին ջարդել ամբողջ խուրձը միանգամից, թե կարող է: Եվ նա, վերցնելով տասներկու նետերը, ջանաց ջարդել դրանք, սակայն բնավ չկարողացավ: Ապա տվեց երկրորդ և երրորդ որդիներին, նաև մյուսներին մեկ առ մեկ, սակայն ոչ ոք չկարողացավ ջարդել: Այդ ժամանակ հրամայեց կրտսեր որդուն մեկ-մեկ բաժանված նետերը վերցնել և հերթով ջարդել, որ նա հեշտությամբ արեց դա, այդժամ Չինգիզ խանը դիմեց իր որդիներին և ասաց. «Այսպես կլինի և ձեզ հետ այնքան ժամանակ, որ կլինեք մի սիրտ և հոգի, ձեր ինքնակալությունը մշտապես տոկուն կլինի, սակայն՝ իրարից բաժանվեու դեպքում շատ արագ ձեր տերությունները առ ոչինչ կդառնան»[1]: Հեթում Պատմիչը նաև նշում է, որ Չինգիզ խանը շատ խրատներ տվեց իր որդիներին, բայց նա միայն միաբան լինելու խրատին է անդրադարձել, քանզի ժամանակը դա էր պահանջում: Միայն միաբանության շնորհիվ կարելի է հաջողության հասնել: Հեթում Պատմիչի երկը կարևոր աղբյուր է մոնղոլական կենտրոնական պետության և իշխանության փոխհարաբերությունների պատմության համար: Նա կարևոր տեղեկություններ է հայտնում Եվրոպայում մոնղոլների նվաճողական նպատակների մասին: Կարևոր աղբյուր է նաև մոնղոլական տիրապետության, Մերձավոր Արևելքի երկրների ռազմաքաղաքական վիճակի, Կիլիկյան հայկական թագավորության, հայ-մոնղոլական հարաբերությունների և այլ հարցերի ուսումնասիրության համար:

1308 թվականին Կիպրոս վերադառնալուց հետո Հեթում Կոռիկոսցին թողել է վանքը և վերադարձել Կիլիկիա, քանի որ ստացել էր մոնղոլ Փիլաղունի կողմից Լևոն IV-ի և Հեթում II-ի սպանության գույժը: Ըստ Կլոդ Մութաֆյանի՝ 1309 թ. Հեթումը ստանձել է գունդստաբլի պաշտոնը[2]: Կղեմես Գալանոսը հաղորդում է, որ 1316 թ. Ադանայի եկեղեցական ժողովի մասնակիցների մեջ հիշատակվող Հայթոնը հենց նույն Հեթում Կոռիկոսցին է: Լևոն Տեր-Պետրոսյանը իր «Խաչակիրները և հայերը» աշխատության մեջ ևս այդ տեսակետն է պաշտպանում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ենթադրվում է, որ Հեթում Կոռիկոսցին մահացել է 1316-1320 թթ. ընկած ժամանակահատվածում[3]:

---

[1] **Ավգերյան Մ.,** Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 37:
[2] Տե՜ս **Mutafian G.,** p. 172:
[3] Տե՜ս նույն տեղում, հմմտ. **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, հ.Բ, էջ 625, **Մաթևոսյան Կ.,** էջ 16:

**Лиана Даллакян, Хетум Корикосци** - Хетум Корикосци родился приблизительно в 1240-х годах. Хетум Историк имеет королевское происхождение. В середине 13-го века крепость Корикос, находящийся в Киликии, пренадлежал одному из младших сыновей Константина Гундстабла Ошину пайлу. Его старшими братьями были царь Хетум I-ый (1226-1270) и Смбат Гундстабл. В 1280-1290-ых годах Хетум Корикосци женился на Забеле, дочери царя Хетума I-ого. После успешного сирийского вторжения, в 1305 году Хетум Корикосци отказался от военной и светской жизни, и став священником перешел в Кипр и вошел в Премонстратскую латинскую конгрегацию (ordere de Premonstre). Хетум получает задание от Папа Кхемес Е написать произведение "Цветок истории из восточного мира" (§La Fleur des Histoires de la terre d'Orient¦).

**Liana Dallakyan, Hethum Korikostsi**- Hethum Korikostsi was born in approximately 1240s. The historian has royal descent. In mid 13th century Korikos fortress of Kilikia belonged to Oshin Payl who was one of young sons of Kostantin Gundstable. His older brothers were King Hethum 1st (1226-1270) and Smbat Gundstable. In 1280-1290s Hethum Korikostsi married King Hethum 1st granddaughter Zabel. Soon after the successful Syrian invasion in 1305 Korikostsi became an ecclesiastic in Cyprus and joined “ordre de Premonstre”. Pope Kghemes E orders Korikostsi to write the book "Flower of the history of East world" («La Fleur des Histoires de la terre d’Orient»). Settling in the church of Puatie, France, Hethum tells his story to monk Nicolas Falcon, who writes down the story in French.

**Լիանա Դալլաքյան**- պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ, երիտասարդ պատմագետների ասոցիացիայի անդամ: